ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբերի 2018 թվականի N 21/3

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ արտահանմանն ուղղված արյդունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ կատարողականի հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2018թ. դեկտեմբերի 28-ի թիվ 21/3 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018

Հաշվեքննության հիմքը

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 14/14 որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքը:

Հաշվեքննությունն իրականացվել է Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» Եվրոպական միության բյուջետային աջակցության թիվ ԵՀԳ/2015/038-229 համաձայնագրի պահանջով:

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն:

Հաշվեքննության առարկան

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության դրամաշնորհային ծրագիր:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2018 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 300 – Կատարողականի աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտի համաձայն:

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը: Հաշվեքննության ողջ ընթացքում հաշվեքննողներին ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)-ի կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին ցուցաբերվող աջակցության ծրագրի շրջանակներում հրավիրված Բրեմենի հաշվեքննիչ պալատի կատարողականի հաշվեքննության պատասխանատու-ղեկավար Յենս Գյուզեի կողմից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1.1. ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության դրամաշնորհային ծրագիրը» (այսուհետ՝ ծրագիր) իրականացվում է 2013թ.-ից, որի համար ՀՀ պետական բյուջեից 2013-2017թթ. ընթացքում տրամադրվել է 2,376,621.1 հազ. դրամ գումար՝

Աղյուսակ 1

Ծրագրի համար փաստացի վճարումները ՀՀ պետական բյուջեներով՝ ըստ տարիների

հազ. դրամ

Տարեթիվը	ՀՀ պետական բյուջեով փաստացի տրամադրված գումարը
2013թ.	463,893.9
2014թ.	563,573.5
2015թ.	475,000.0
2016թ.	418,600.0
2017թ.	455,553.7
Ընդամենը	2,376,621.1

2017 թվական - Ծրագրի իրականացման համար 2017 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 475,000.0 հազ. դրամ գումար, որն առանց մրցույթի դրամաշնորհի տեսքով պետք է տրամադրվեր «Հայաստանի զարգացման հիմնադրամին» (այսուհետ՝ հիմնադրամ): 2017թ. մայիսի 3-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի թիվ 402-Ա հրամանով հաստատվել է ծրագիրն ու միջոցառումների ցանկը և հանձնարարվել՝ դրամաշնորհի տրամադրման պայմանագիրը կնքել հիմնադրամի հետ: Նախարարության և հիմնադրամի միջև «Պետության կողմից դրամաշնորհի տեսքով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման» թիվ 33-17 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) կնքվել է 2017թ. մայիսի 23-ին[1] (մանրամասն ներկայացված է հավելված 1-ում), 475,000.0 հազ. դրամ արժեքով:

[1] Պայմանագիրը տարածվում է 2017թ. հունվարի 9-ից հետո ծագած հարաբերությունների վրա

1.2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1523-Ն որոշմամբ «Արդյունաբերության զարգացման հիմնադրամը» և «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը» միաձուլման ձևով վերակազմակերպվել են «Հայաստանի զարգացման հիմնադրամի»:

Հիմնադրամի կանոնադրության համաձայն, վերջինիս առաքելությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի խթանումն է, որի իրագործմանը ձգտում է հետևյալ նպատակների իրականացման միջոցով[2]՝

- երկրի վարկանիշի և մրցունակության բարձրացում,
- ներդրումների ներգրավում,
- արտահանման խթանում,
- գործարար միջավայրի բարելավում,
- տարածքային զարգացման ծրագրերի իրականացում,
- զբոսաշրջության խթանման աջակցում:

Մինչև վերակազմակերպումը ծրագիրն իրականացվել է «Արդյունաբերության զարգացման հիմնադրամի» կողմից, իսկ հիմնադրամի կողմից ծրագրի իրականացումը սկսվել է 2015թ.-ից: Վերջինս ՀՀ պետական բյուջեով ստանում է նաև այլ դրամաշնորհներ՝

Աղյուսակ 2

Հիմնադրամի կողմից ՀՀ պետական բյուջեներով ստացված դրամաշնորհները

հազ. դրամ

Տարեթիվը	Պետական աջակցություն հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը	ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ոազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն	Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր (նախարարության հետ)	Զբոսաշրջության աջակցության ծառայություններ	Ընդամենը բոլոր ծրագրերով
2015թ.	0.0	475,000.0	0.0	0.0	475,000.0
2016թ.	394,926.5	418,600.0	16,908.4	75,400.0	905,834.9
2017թ.	348,737.9	455,553.7	21,032.4	0.0	825,324.0
Ընդամենը	743,664.4	1,349,153.7	37,940.8	75,400.0	2,206,158.9

[2] Հիմնադրամի գործառույթները, ըստ կանոնադրության, ներկայացված են հավելված 2-ում:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. 2017թ. ծրագրի փոփոխությունների վերաբերյալ

Չի պահպանվել պայմանագրերի փոփոխությունների կնքման ժամանակագրությունը:

Պայմանագիրը կնքելուց հետո շատ չանցած՝ 2017թ. հուլիսի 14-ին, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի թիվ 666-Ա հրամանով 03.05.2017թ. թիվ 402-Ա հրամանում կատարվել է փոփոխություն, որով Ծրագրի *«2.1. արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում»* միջոցառման (65,000.0 հազ. դրամ) կատարողն այլևս հիմնադրամը չի: Վերջինիս իրականացման համար պետք է պայմանագիր կնքվի «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ» ՓԲԸ-ի հետ (այսուհետ՝ ՈՒՎԿ): Պայմանագիրը ՈՒՎԿ-ի հետ կնքվել է 3 օր հետո՝ 2017թ. հուլիսի 17-ին, սակայն համապատասխան փոփոխությունները հիմնադրամի հետ կնքված պայմանագրում կատարվել են միայն 2017թ. օգոստոսի 8-ին: Չի պահպանվել պայմանագրերի փոփոխությունների կնքման ժամանակագրությունը:

Այնուհետև, 2017թ. դեկտեմբերի 15-ին (տարվա ավարտից ընդամենը 2 շաբաթ առաջ) երկու պայմանագրերում կատարվել է ևս մեկ փոփոխություն (նախարարի հրամանում համապատասխան փոփոխությամբ), որով *«2.2 օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում»* միջոցառումը (20,000.0 հազ. դրամ) դուրս է եկել հիմնադրամի պայմանագրից և տրամադրվել ՈՒՎԿ-ի կողմից իրականացվող *«արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում»* միջոցառմանը (պայմանագրերի փոփոխությունները մանրամասն ներկայացված են հավելված 1-ում): Արդյունքում, հիմնադրամի հետ պայմանագրի արժեքը կազմում է 390,000.0 հազ. դրամ, իսկ ՈՒՎԿ-ի հետ պայմանագիրը՝ 85,000.0 հազ. դրամ, միասին՝ 475,000.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 455,553.7 հազ. դրամ, որից՝ հիմնադրամի մասով՝ 390,000.0 հազ. դրամ, ՈՒՎԿ-ի մասով՝ 65,553.7 հազ. դրամ:

2. Ծրագրի շրջանակներում կատարված վճարումների վերաբերյալ

ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշմամբ հաստատվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի օրինակելի ձևը, որի 4.1. կետով («Վճարման կարգը և ժամկետները») սահմանվել է, որ *վճարումները կատարվում են*

միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և/կամ ժամկետներ: Իսկ 2017թ. մայիսի 3-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի թիվ 402-Ա հրամանով հաստատված ծրագրով ***վճարումների կատարման այլ կարգ չի սահմանվել:***

Պայմանագրով չի պահպանվել օրինակելի ձևով սահմանված վճարումների կարգը

Հիմնադրամի հետ 23.05.2017թ. կնքված թիվ 33-17 պայմանագրի 4.1. կետով սահմանվել է, որ *հիմնադրամին վճարումներն իրականացվում են պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում հիմնադրամի կողմից ներկայացվող եռամսյակային հայտերի հիման վրա՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները սահմանված կարգով ոլորտային հանձնաժողովի*[3] *կողմից ընդունման արդյունքներով: Ընդ որում՝ պետական բյուջեից առաջին եռամսյակի համար հատկացված 47,500.0 հազ. դրամ գումարի վճարումը կատարվում է պայմանագիրը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ ներկայացված հայտի, իսկ յուրաքանչյուր հաջորդող եռամսյակի առաջին ամսվա գումարների վճարումը կատարվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ հիմնադրամի կողմից ներկայացված հայտերի հիման վրա, մինչև ներկայացված հաշվետվությունների՝ հանձնաժողովի կողմից սահմանված ընդունումը:* Այսինքն, պայմանագրով չի պահպանվել օրինակելի ձևով սահմանված վճարումների կարգը: Եթե պայմանագրի օրինակելի ձևով նախատեսված էր նախ՝ հաշվետվության ներկայացումն ու ընդունումը, այնուհետև՝ վճարումը, ապա այս պայմանագրով ստացվում է հաջորդ եռամսյակի համար ֆինանսավորման հայտի և նախորդ եռամսյակի հաշվետվության ներկայացում, որից 10 աշխատանքային օր հետո վճարել առաջին ամսվա գումարը, իսկ մնացած գումարի վճարումը՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները սահմանված կարգով ոլորտային հանձնաժողովի կողմից ընդունման արդյունքներով: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ չի պահպանվել անգամ պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդունման և վճարման կարգը:

Չի պահպանվել անգամ պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդունման և վճարման կարգը:

Այսպես՝ ***նախ չի պահպանվել առաջին եռամսյակի համար պետական բյուջեով նախատեսված 47,500.0 հազ. դրամի վճարման կարգը:*** Այն պետք է վճարվեր պայմանագիրը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ հիմնադրամի ներկայացված հայտի: Հիմնադրամի կողմից նման հայտ չի ներկայացվել

[3] Հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.04.2017թ. թիվ 351-Ա հրամանով:

և չի վճարվել: Հետագա վճարումների իրականացումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 3

Հիմնադրամի կողմից կատարված աշխատանքները և հիմնադրամին կատարված վճարումները

հազ. դրամ

Կատարված աշխատանքները՝ ըստ հանձնաժողովի արձանագրությունների		
15.06.2017թ.	1-ին եռամսյակի համար	70,099.7
14.08.2017թ.	2-րդ եռամսյակի համար	49,496.5
Ընդամենը 1-ին կիսամյակ		**119,596.2**
23.10.2017թ.	3-րդ եռամսյակի համար	76,015.0
27.03.2018թ.	4-րդ եռամսյակի համար	106,540.4
Ընդամենը տարի		**302,151.6**

Հիմնադրամի կողմից Ֆինանսավորման հայտերը	
29.05.2017թ. 1-ին կիսամյակի համար	166,250.0
01.07.2017թ. 3-րդ եռամսյակի համար	166,250.0
01.10.2017թ. 4-րդ եռամսյակի համար	218,917.0

Վճարումները Հիմնադրամին	
01.06.2017թ.	87,083.0
01.08.2017թ.	45,000.0
04.08.2017թ.	39,000.0
Ընդամենը	**171,083.0**
24.10.2017թ.	71,000.0
26.12.2017թ.	147,917.0
Ընդամենը	218,917.0
Ընդամենը տարի	**390,000.0**

Առաջին կիսամյակի համար ֆինանսավորման հայտը կազմել է 166,250.0 հազ. դրամ, աշխատանքները կատարվել են 119,596.2 հազ. դրամի չափով, իսկ նախարարությունը փաստացի վճարել է 171,083.0 հազ. դրամ:

Այնուհետև, հիմնադրամի կողմից առաջին ֆինանսավորման հայտը ներկայացվել է պայմանագիրը կնքելուց 6 օր հետո՝ 29.05.2017թ.-ին՝ առաջին կիսամյակի համար միանգամից[4]՝ 166,250.0 հազ. դրամ: Աշխատանքների ընդունման ոլորտային հանձնաժողովի 15.06.2017թ. նիստով ընդունվել են առաջին եռամսյակի աշխատանքները և բավարարվել է առաջին կիսամյակի հայտը՝ մինչև 166,250.0 հազ. դրամ: Իսկ 14.08.2017թ. նիստով ընդունվել են ամբողջ կիսամյակի աշխատանքները՝ 119,596.2 հազ. դրամ: Ստացվում է, որ առաջին կիսամյակի համար ֆինանսավորման հայտը կազմել է 166,250.0 հազ. դրամ, աշխատանքները կատարվել են 119,596.2 հազ. դրամի չափով, իսկ նախարարությունը փաստացի վճարել է 171,083.0 հազ. դրամ գումար:

Երրորդ եռամսյակի դիմաց վճարում չի կատարվել

14.08.2017թ.-ի նիստով հանձնաժողովը բավարարել է երրորդ եռամսյակի հայտը (ներկայացրել էր

[4] Պայմանագրի դրույթները տարածվում էին հունվարի 9-ից հետո ծագած հարաբերությունների վրա, այնպես որ ֆինանսավորման հայտում հաշվի է առնված նաև մինչև այդ կատարված վճարումները: Մինչև պայմանագրի կնքումը կատարվել է 70,099.7 հազ. դրամի ծախսեր:

01.07.2017թ.-ին)՝ մինչև 166,250.0 հազ. դրամ գումարով, իսկ 23.10.2017թ.-ի նիստով՝ երրորդ եռամսյակի աշխատանքները՝ 76,015.0 հազ. դրամ: ***Նախարարությունը հիմնադրամին երրորդ եռամսյակի դիմաց վճարում չի կատարել***:

Այնուհետև, 23.10.2017թ.-ի նիստով հանձնաժողովը բավարարել է 4-րդ եռամսյակի համար հայտը՝ մինչև 218,917.0 հազ. դրամ, որը հիմնադրամը ներկայացրել էր հոկտեմբերի 1-ին:

Հոկտեմբերի 1-ի դրությամբ հիմնադրամը կատարել էր 195,611.2 հազ. դրամի աշխատանքներ կամ պայմանագրի գումարի՝ 410,000.0 հազ. դրամի ***47.7%-ը***, այսինքն՝ 4-րդ եռամսյակի ընթացքում պետք է կատարվեին պայմանագրով նախատեսված աշխատանքների մնացած կեսը: ***Հանձնաժողովի նիստի արձանագրությունում որևէ պարզաբանում չկա՝ արդյոք հիմնադրամը կկարողանա պայմանագրով նախատեսված աշխատանքների մնացած կեսն իրականացնել ընդամենը 3 ամսում:***

Չի կատարվել «Օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում» միջոցառումը:

Հոկտեմբերի 1-ի դրությամբ նախարարությունը հիմնադրամին վճարել էր ընդամենը 171,083.0 հազ. դրամ, հետևաբար, հիմնադրամը վերջին եռամսյակի հայտով ներկայացրել է այնքան գումար, որով ընդհանուր վճարումները կազմեն 390,000.0 հազ. դրամ (390,000.0-171,083.0): Սակայն պարզ չէ, թե ինչու է հիմնադրամը 2017թ. հոկտեմբերի 1-ի հայտով պահանջել 218,917.0 հազ. դրամ՝ ելնելով պայմանագրի 390,000.0 հազ. դրամ արժեքից այն դեպքում, երբ պայմանագրի արժեքը այդ ժամանակ 410,000.0 հազ. դրամ էր[5]: Այսինքն՝ դեռևս հոկտեմբերի 1-ի դրությամբ արդեն ակնհայտ էր նաև 20,000.0 հազ. դրամ արժեքով *«2.2 օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում»* միջոցառման չկատարելը: Ըստ նախարարության կողմից ներկայացված պարզաբանման, նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ այս գործիքը լայն պահանջարկ չունի վերամշակող և արտահանման միտվածություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների կողմից: ***Այս դեպքում ընդհանրապես հասկանալի չէ նման միջոցառման ընդգրկումը 2017թ. ծրագրում***:

Պետական բյուջեից հիմնադրամին ավել է վճարվել 87,848.4 հազ. դրամ

2018թ. մարտի 27-ի նիստով ընդունվել են 2017թ. չորրորդ եռամսյակի աշխատանքները՝ 106,540.4 հազ. դրամ, իսկ ամբողջ տարվա աշխատանքները՝ 302,151.6 հազ. դրամ: Սակայն նախարարությունը հիմնադրամին արդեն վճարել էր 218,917.0 հազ. դրամ գումարը, չնայած որ հանձնաժողովի 23.10.2017թ. նիստով հայտը բավարարվել էր ***մինչև*** 218,917.0 հազ. դրամ գումարով (պայմանագրով էլ գումարը սահմանված է ***մինչև*** 390,000.0 հազ. դրամ): Արդյունքում՝ ***Հիմնադրամի կողմից կատարվել է 302,151.6 հազ. դրամ արժեքով աշխատանք, որի դիմաց պետական բյուջեից վճարվել է 390,000.0 հազ. դրամ: Ավել վճարված գումարը՝ 87,848.4 հազ. դրամ, հանձնաժողովն ընդունել է դեբիտորական պարտք:***

[5] Պայմանագրի արժեքը 390,000.0 հազ. դրամ դարձել է դեկտեմբերի 15-ին:

Պայմանագրի 4.1. կետով սահմանված կարգի պատճառով մինչև հանձնաժողովի կողմից աշխատանքների վերջնական ընդունումը նախօրոք վճարումներ կատարելը բերել է նրան, ***որ կատարված աշխատանքների համեմատ պետական բյուջեից հիմնադրամին ավել է վճարվել 87,848.4 հազ. դրամ գումար:*** Իսկ եթե պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան վճարման կարգ սահմանվեր պայմանագրով, ապա այդ գումարը կամ չէր փոխանցվի հիմնադրամին, կամ՝ կմնար նախարարության մոտ, և ՀՀ կառավարության 29.12.2016թ. թիվ 1313-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի[6] համաձայն, ***փարեվերջին հետ կվերադարձվեր ՀՀ պետական բյուջե:***

Մյուս կողմից՝ հիմնադրամը աշխատանքներ չի կատարել միայն *«Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում»* (5,000.0 հազ. դրամ) միջոցառման շրջանակներում (ըստ հանձնաժողովի՝ դա բացատրվում է մասնավոր հատվածի կողմից հայտերի բացակայությամբ): Ըստ նախարարության, մյուս միջոցառումների շրջանակներում հիմնադրամը իրականացրել է նույնիսկ պայմանագրով նախատեսված քանակներից ավել քանակով միջոցառումներ, ինչով նախարարությունն ընդունել է աշխատանքների ամբողջ ծավալը կատարված, որոշ դեպքերում՝ նույնիսկ գերակատարված: Այս դեպքում անհասկանալի է ավել վճարված գումարների ընդունումը որպես դեբիտորական պարտք, եթե աշխատանքների ծավալը կատարված էր:

Անհասկանալի է ավել վճարված գումարների ընդունումը որպես դեբիտորական պարտք, եթե աշխատանքների ծավալը կատարված էր

Հանձնաժողովը միայն *«Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում»* միջոցառման համար է ամրագրել՝ ֆինանսավորված 5,000.0 հազ. դրամի տնօրինումը հետագայում իրականացնել պայմանագրի դրույթներին համապատասխան:

Մյուս կողմից, եթե շատ ավելի քիչ գումարով կարելի էր իրականացնել աշխատանքների ամբողջ ծավալը, և հաշվի առնելով, որ այս ծրագիրն իրականացվում է դեռևս 2013թ.-ից, և յուրաքանչյուր տարվա համար աշխատանքներ պլանավորելիս հաշվի են առնվում նաև նախորդ տարիների փաստացի ծավալները և գումարները, հետևաբար ճիշտ չեն պլանավորվել նախատեսված ծավալով աշխատանքների համար ֆինանսական միջոցների իրատեսական ծավալները:

Ճիշտ չի իրականացվում ֆինանսական միջոցների պլանավորումը:

Հանձնաժողովի արձանագրություններն ուսումնասիրելիս պարզվեց նաև, որ ***2017թ.-ի ավարտին հիմնադրամն ունի դեռևս 2014-2016թթ. ծրագրերի մասով 40,778.4 հազ. դրամի ֆինանսական միջոցներ, որոնք նույնպես համարվում են դեբիտորական պարտքեր***:

---

[6] ՀՀ կառավարության 29.12.2016թ. թիվ 1313-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին հանձնարարվել է՝ 2017թ. վերջին աշխատանքային օրվա ավարտին՝ համակարգի բյուջետային հիմնարկների դրամարկղերում և գանձապետական հաշիվներում ՀՀ պետական բյուջեի առկա մնացորդները 2017թ. բյուջետային տարվա վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել ՀՀ պետական բյուջե՝ որպես 2017թ. բյուջետային տարում չօգտագործված միջոցներ:

Չի կատարվել ՀՀ վերահսկիչ պալատի նախկինում ներկայացրած առաջարկությունը

Հարկ է նշել, որ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 2014թ.-ին նույնպես ուսումնասիրվել էր այս ծրագրի 2013-2014թթ. իրականացումը, որի արդյունքում նույնպես արձանագրվել էր, որ շարունակաբար ավելանում է «Արդյունաբերության Զարգացման Հիմնադրամի» (այն ժամանակ ծրագիրն իրականացվում էր այդ հիմնադրամի կողմից) տարեկան ֆինանսավորման չափը, և յուրաքանչյուր տարվա վերջում առաջանում են չծախսված ազատ դրամական միջոցներ, որն ***այդ ժամանակ հիմնադրամի կողմից ավանդադրվում էր բանկերում:*** ՀՀ վերահսկիչ պալատի կողմից նախարարությանը ներկայացվել էր առաջարկություն՝ *«Նախատեսել «Արդյունաբերության Զարգացման Հիմնադրամի» տարեկան ֆինանսավորման ավելի իրատեսական պլանավորում, հնարավորինս ամբողջական կատարել նախատեսված աշխատանքները՝ տարեկան չծախսված ազատ դրամական միջոցների առաջացումը բացառելու համար»*:

Ինչպես երևում է արդեն 2017թ.-ի ցուցանիշներից, 2017թ.-ին աշխատանքները իրականացվել են նույն կերպ, ինչպես նախկինում:

Հիմնադրամին ավել է վճարվել 89,475.7 հազ. դրամ:

Որպես դեբիտորական պարտք ճանաչված 87,848.4 հազ. դրամ գումարը հիմնադրամը 2018թ.-ի ընթացքում ծախսել է հետևյալ կերպ: Նախ՝ հանձնաժողովի 27.03.2018թ. նիստի արձանագրությունից պարզվեց, որ 2017թ. նոյեմբերի 15-18-ը ԱՄԷ Դուբայ քաղաքում կայացած VOD DUBAI INTERNATIONAL JEWELLERY SHOW միջազգային մասնագիտացված ոսկերչական ցուցահանդեսին հայկական ընկերություններ չեն մասնակցել, և հանձնաժողովը չի ընդունել դրա մասով հիմնադրամի կողմից կատարված 1,627.3 հազ. դրամ ծախսը: Այն իրենից ներկայացնում է հիմնադրամի երկու աշխատակիցների գործուղման (օրապահիկ, գիշերավարձ)՝ 1,293.99 հազ. դրամ, և ավիատոմսերի՝ 333.35 հազ. դրամ ծախսերը: Այս գումարը հիմնադրամը որպես գումարի վերադարձ է ճանաչել 2018թ. երրորդ եռամսյակում, արդյունքում՝ հիմնադրամին ավել վճարված գումարը կազմում է 89,475.7 հազ. դրամ:

2018թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հաշվետվությունն ուսումնասիրելու արդյունքում պարզվեց, որ այդ գումարը հիմնադրամը նախատեսում է ծախսել հետևյալ ուղղություններով՝

- *<u>Արտասահմանյան երկրներում գործարար առաքելություններ՝ ՀՀ ԱԳՆ, ՀՀ կառավարության, ՀՀ ՏԶՆՆ, արտերկրյա գործարարության աջակցության կառույցների/ ասոցացիաների հետ համագործակցությամբ՝ 20,000.0 հազ. դրամ</u>:* 01.10.2018թ. դրությամբ ծախսել է 6,375.2 հազ. դրամ (հիմնականում՝ հիմնադրամի աշխատակիցների գործուղման և ավիատոմսերի ձեռք բերման ծախսեր): Այստեղ առկա է 837.6 հազ. դրամ գումարով գործուղման ծախս՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալին Լոնդոն գործուղելու համար, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ վարչապետի 19.06.2018թ. թիվ 791-Ա որոշումը, ըստ որի, գործուղման ծախսերը պետք է կատարվեն հիմնադրամի միջոցների հաշվին՝ առանց նշելու այս ծրագրի միջոցները: Հիմնադրամն այս ծրագրի գումարներից բացի ՀՀ պետական

բյուջեից ստանում է նաև կանոնադրական հիմնախնդիրների իրականացման համար դրամաշնորհ:

- *Ձևափոխիր ինքդ ներդրումային ծրագիր՝ 19,100.0 հազ. դրամ:* 01.10.2018թ. դրությամբ ծախսել է 19,033.1 հազ. դրամ (մրցույթի մրցանակ և եկամտային հարկ): Ըստ նախարարության ներկայացրած տեղեկատվության, այս ծախսն իրականացնելու համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի 07.02.2018թ.-ի թիվ 02/23/1770-18 գրությունը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին և հիմնադրամի գործադիր տնօրենին (ՀՀ վարչապետի հանձնարարությամբ), ըստ որի, հանձնարարվել է այս ծրագրի տնտեսված միջոցների հաշվին նվիրատվության պայմանագրեր կնքելու միջոցով «Ձևափոխիր» զբոսաշրջության զարգացման ներդրումային ծրագրերի հաղթող ճանաչված երեք ծրագրերին («Էկո-տնակները Հայաստանում», «ՍևԱփ հանգստյան գոտի», «Երևանյան լիճ սմարթ պարկ») հատկացնել ընդհանուր 19,030.3 հազ. դրամ (այդ թվում՝ 4,584.1 հազ. դրամ եկամտահարկ): Պետք է նշել, որ 2017թ. ծրագրով և պայմանագրով զբոսաշրջության զարգացման ներդրումային ծրագրերի մասով որևէ միջոցներ և միջոցառումներ նախատեսված չեն եղել:
- *«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ՝ 43,924.2 հազ. դրամ՝* **«Այլ»** *մեկնաբանությամբ*: 01.10.2018թ. դրությամբ փաստացի ծախսվել է 5,932.3 հազ. դրամ՝ գործուղման և ավիատոմսերի ձեռք բերման վրա: Այս կատարված ծախսերի համար, ըստ նախարարության, հիմք են հանդիսացել ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2018թ. օգոստոսի 29-ի գրությունը նախարարին և հիմնադրամի գործադիր տնօրենին, ըստ որի, 2018թ. սեպտեմբերի 25-30-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում տեղի ունենալիք չինական լրատվական գործակալության հաղորդաշարի շրջանակներում ՀՀ վարչապետի հետ հարցազրույցի համար հիմնադրամի կողից իրականացվում է պատվիրակության ընդունելության ծախսերի ֆինանսավորումը, որը հանձնարարվել է իրականացնել այս ծրագրի միջոցների մնացորդի հաշվին:

Պարզ չէ մնացած գումարի հետագա ծախսման ուղղությունները:

Պայմանագրի 2.4.2. կետի համաձայն, հիմնադրամը պարտավոր էր պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակով: ***Վերը նշված միջոցառումները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված միջոցառումներին, և պայմանագրում, և նախարարի 402-Ա հրամանով հաստատված ծրագրում որևէ նման փոփոխություններ չեն կատարվել:***

- Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում՝ 4,000.0 հազ. դրամ ***այն դեպքում, երբ այդ գումարը պետք է կազմեր 5,000.0 հազ. դրամ, ինչով չի պահպանվել հանձնաժողովի պահանջը:*** 01.10.2018թ. դրությամբ այս մասով աշխատանքներ չեն կատարվել:

2.1. Հիմնադրամի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ
(մանրամասն՝ հավելված 3-ում)

2.1.1. Միջոցառում N 1՝ Գործարար համաժողովների (ֆորումների), ինչպես նաև՝ այլ համանման միջոցառումների մասնակցություն և/կամ կազմակերպում

Այս միջոցառման շրջանակներում ակնկալվում է մշակող արդյունաբերության ոլորտների տնտեսվարող սուբյեկտներին ցուցաբերել աջակցություն՝ օտարերկրյա պետությունում մասնակցության համար, կատարված ծախսերի փոխհատուցում (համաֆինանսավորում)՝ մինչև 50 տոկոսի չափով՝ ըստ տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված հայտի: Ակնկալվում է մասնակցել և/կամ կազմակերպել **առնվազն 5** շնորհանդես և/կամ համաժողով և/կամ այլ համանման միջոցառումներ:

Այս միջոցառման շրջանակներում որևէ մշակող արդյունաբերության ոլորտների տնտեսվարող սուբյեկտների չի ցուցաբերել պայմանագրով սահմանված աջակցության տեսակը՝ կատարված ծախսերի փոխհատուցում

Այս աշխատանքների համար պայմանագրով նախատեսվել էր 50,000.0 հազ. դրամ: Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվեց, որ այս միջոցառման շրջանակներում հիմնադրամը կատարել է 25,898.63 հազ. դրամ գումարի ծախս, որն իրենից ներկայացնում է հիմնադրամի ներկայացուցիչների[7] գործուղման (օրապահիկ, գիշերավարձ), ավիատոմսերի ձեռք բերման, արտերկրում տարածքի վարձակալության, ՀՀ-ում միջոցառումների շրջանակներում՝ տեղական կազմակերպություններին վճարներ՝ որոշակի կազմակերպչական բնույթի ծառայությունների համար: Այս միջոցառման շրջանակներում որևէ մշակող արդյունաբերության ոլորտների տնտեսվարող սուբյեկտների չի ցուցաբերել պայմանագրով սահմանված աջակցության տեսակը՝ կատարված ծախսերի փոխհատուցում (համաֆինանսավորում)՝ մինչև 50 տոկոսի չափով:

Նշված գումարը ծախսվել է արտերկրում և Երևանում կայացած 12 միջոցառումների (գործարար համաժողովների) համար, բացի այդ, ըստ Հիմնադրամի հաշվետվության, իրականացվել են ևս 3 միջոցառումներ Հայաստանում, որոնց շրջանակներում ծրագրի միջոցներից գումար չի ծախսվել: Հիմնադրամի ներկայացված հաշվետվությամբ որևէ կերպ չի արտացոլվել 28.06.2017թ.-ին Ցյուրիխում, օգոստոսի 21-24-ը Լոս Անջելոսում, հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը Լոնդոնում, դեկտեմբերի 1-ին Բրյուսելում կայացած միջոցառումներին տեղական կազմակերպությունների մասնակցության վերաբերյալ տեղեկատվություն: Ընդհանուր առմամբ, ծրագրի N 1 միջոցառման մասով հիմնադրամի հաշվետվությունից ***պարզ չէ, թե քանի տնտեսվարող սուբյեկտ է մասնակցել թվարկված 15 միջոցառումներին***:

Նախարարության կողմից ներկայացված պարզաբանման համաձայն, տնտեսվարող սուբյեկտներին ծախսերի փոխհատուցում (համաֆինանսավորում) չի

[7] Ծրագրի շրջանակներում տարբեր միջոցառումներին մասնակցելու համար գործուղվել են հիմնադրամի աշխատակիցները, բացառությամբ երկու անձանց, որոնք հանդիսացել են նախարարության աշխատակիցներ:

տրամադրվել՝ նրանց կողմից համապատասխան հայտեր ներկայացված չլինելու պատճառով, մասնակցությունը հիմնականում ապահովվել է հիմնադրամի և պետական կառույցների ներկայացուցիչների միջոցով: ***Այս դեպքում անհասկանալի է այս՝ մշակող արդյունաբերության ոլորտների տնտեսվարող սուբյեկտներին աջակցություն ցուցաբերելու համար միջոցառման պլանավորումը և դրա պահանջարկի հիմնավորումը:***

Նախարարությունից հավելյալ պահանջված տեղեկատվության ուսումնասիրությամբ պարզվեց, որ հինգ միջոցառումների շրջանակներում (ընդհանուր՝ 7,098.68 հազ. դրամ արժեքով) տնտեսվարող սուբյեկտներ չեն մասնակցել ընդհանրապես, իսկ մնացած միջոցառումներին մասնակցողների ցանկում առկա են նաև ոչ մշակող արդյունաբերության ոլորտների տնտեսվարող սուբյեկտներ, օրինակ՝ առևտրային բանկեր, տարբեր հիմնադրամներ, համալսարան, միություններ, տուրիստական կազմակերպություններ և այլն:

2.1.2. Միջոցառում N 3.1. Օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում

Պայմանագրով ակնկալվում է նպաստել հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացմանը և տեղական արտադրանքի առաջմղմանը՝ **առնվազն 5** միջոցառումների իրականացման և/կամ կազմակերպման միջոցով:

Նշված միջոցառումների համար պայմանագրով նախատեսվել էր 22,500.0 հազ. դրամ: Հիմնադրամի հաշվետվության համաձայն, կատարվել է ընդամենը 3,400.0 հազ. դրամ գումարով վճարում տեղական մեկ կազմակերպության՝ 2019 թվականին Հայաստանում կազմակերպվելիք միջազգային տնտեսական գործարար համաժողովի կազմակերպչական աշխատանքների համար:

Հաշվետվությամբ պարզ չէ աշխատանքների համար իրականացրած ծախսերի աղբյուրները և ժամանակահատվածը

Ըստ հաշվետվության, հիմնադրամը այս ենթածրագրի շրջանակներում իրականացրել է գովազդային արշավների կազմակերպում (նախորդ միջոցառման շրջանակներում իրականացրած համաժողովներն են նկարագրված), այդ թվում՝ հայկական արտադրանքի վերաբերյալ բուկլետների և կատալոգների հրատարակում, էլեկտրոնային ռեսուրսների պատվիրում, արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվական նյութերի ձեռք բերում և այլն: ***Այս ծրագրի միջոցներից նման ծախսեր չեն կատարվել:*** Հաշվետվությամբ պարզ չէ այդ աշխատանքների համար իրականացրած ծախսերի աղբյուրները և ժամանակահատվածը: Հետևաբար՝ ***անհասկանալի է այս ծրագրի շրջանակներում 22,500.0 հազ. դրամ գումար նախատեսելը***, եթե նման աշխատանքներ հիմնադրամը իրականացրել է իր ունեցած այլ գումարներից կամ նախորդ տարիների ընթացքում, և արդյունքում ***դրանց անհրաժեշտությունն ընդհանրապես չի առաջացել 2017թ. ծրագրի շրջանակներում***:

2.1.3. Միջոցառում N 3.2. Ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում

Ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է թիրախային շուկաներում և Հայաստանում մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպություններին ցուցահանդեսներին **(առնվազն 5)** մասնակցության աջակցության տրամադրում՝ (ա) միասնական հայկական տաղավարով մասնակցության, (բ) առանց միասնական տաղավարով մասնակցության և (գ) անհատական մասնակցության ձևաչափերով:

Այս միջոցառման համար պայմանագրով (ներառյալ՝ փոփոխությունները) նախատեսվել էր 312,150.0 հազ. դրամ: Փաստացի ծախսվել է 272,503.0 հազ. դրամ, որի գերակշիռ մասը՝ 92%-ը (251,467.9 հազ. դրամ) հատկացվել է տարբեր միջոցառումների համար մասնակցության վճարներին, տարածքների վարձակալությանը, դրանց շրջանակներում էլեկտրաէներգիայի և այլ ծախսերին: Գումարները ծախսվել են 16 միջոցառումների/ցուցահանդեսների համար, որից մեկը հետագայում հանձնաժողովի կողմից չի ընդունվել և դրա շրջանակներում ծախսված գումարը հիմնադրամը վերականգնել է որպես չծախսված:

Հաշվետվության ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ծախսված 272,503.0 հազ. դրամի 86%-ը տրամադրվել է Ռուսաստանում տեղի ունեցող ցուցահանդեսներին (235,318.1 հազ. դրամ), ընդ որում՝ 63,936.2 հազ. դրամը կամ ընդհանուրի 23%-ը 2017թ. դեկտեմբերի 22-26-ին փոխանցվել է Ռուսաստանում 2018թ.-ի փետրվար-մարտ ամիսներին կայանալիք 3 ցուցահանդեսներին:

Հաշվետվությունից պարզ չէ, թե ընդհանուր առմամբ քանի տնտեսվարող սուբյեկտ է մասնակցել այս ցուցահանդեսներին, քանի որ որոշ ցուցահանդեսներին մասնակից տնտեսվարող սուբյեկտները թվարկված չեն:

Նախարարությունից հավելյալ պահանջված տեղեկատվության համաձայն՝ նշված ցուցահանդեսներին մասնակցել են ընդհանուր 127 տնտեսվարող սուբյեկտներ, որից 104-ը կնքել են արտահանման պայմանագրեր՝ ընդհանուր 5,389.0 մլն դրամ արժեքով (առանց մանրամասն ուսումնասիրելու մասնակցող կազմակերպությունները, իսկ մի մասը թվարկված չեն հաշվետվության մեջ):

Նախարարությունն ամփոփել է ցուցահանդեսներին մասնակցության ցուցանիշները՝ առանց բացառելու կազմակերպությունների կողմից մեկից ավելի անգամ տարբեր միջոցառումներին մասնակցությունը:

Ցուցահանդեսներին մասնակից կազմակերպության ցանկերն ուսումնասիրելու արդյունքում պարզվեց, որ որոշ կազմակերպություններ մասնակցում են ցուցահանդեսներից մի քանիսին, այսինքն՝ նախարարությունն այդ ցուցանիշները (127 տնտեսվարող սուբյեկտներ) ամփոփել է՝ առանց բացառելու կազմակերպությունների կողմից մեկից ավելի անգամ տարբեր միջոցառումներին մասնակցությունը: Այսպես օրինակ՝

- ✓ Մոսկվա քաղաքում սննդի և խմիչքի արտադրության ոլորտին վերաբերող երեք ցուցահանդեսներին՝ PRODEXPO-2017 (2017թ. փետրվարի 6-10), Worldfood-2017 (2017 սեպտեմբերի 11-14) և կայանալիք PRODEXPO-2018 (2018թ. փետրվարի 5-9), ընդհանուր մասնակիցների ցանկը կազմում է 60 կազմակերպություն, սակայն, եթե բացառենք կազմակերպությունների կողմից մեկից ավելի մասնակցությունը միջոցառումներին (18 կազմակերպություն մասնակցել է մեկից

ավելի միջոցառման), կունենանք, որ այս միջոցառումներին մասնակցել են ընդամենը 38 կազմակերպություններ,

- ✓ Մոսկվա քաղաքում տեքստիլի արտադրության ոլորտին վերաբերող երեք ցուցահանդեսներին՝ Текстильлегпром-2017 (2017թ. փետրվարի 14-17), Текстильлегпром-2017 (2017 օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը) և կայանալիք Текстильлегпром-2018 (2018թ. մարտի 13-16), ընդհանուր մասնակիցների ցանկը կազմում է 16 կազմակերպություն, սակայն, եթե բացառենք կազմակերպությունների կողմից մեկից ավելի մասնակցությունը միջոցառումներին (5 կազմակերպություն մասնակցել է մեկից ավելի միջոցառման), կունենանք, որ այս միջոցառումներին մասնակցել են ընդամենը 8 կազմակերպություններ,
- ✓ Մոսկվա քաղաքում կաշվի, կոշիկի և կաշվե աքսեսուարների արտադրության ոլորտին վերաբերող երեք ցուցահանդեսներին՝ MosShoes-2017 (2017թ. մարտի 14-17), MosShoes-2017 (2017 սեպտեմբերի 5-8) և կայանալիք MosShoes-2018 (2018թ. մարտի 13-16), ընդհանուր մասնակիցների ցանկը կազմում է 26 կազմակերպություն, սակայն, եթե բացառենք կազմակերպությունների կողմից մեկից ավելի մասնակցությունը միջոցառումներին (8 կազմակերպություն մասնակցել է մեկից ավելի միջոցառման), կունենանք, որ այս միջոցառումներին մասնակցել են ընդամենը 15 կազմակերպություններ և այլն:

2.1.4. Միջոցառում N 3.3. Գործարար կապերի հաստատում

Պայմանագրի համաձայն, ակնկալվում է արդյունաբերական ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին ցուցաբերել աջակցություն՝ կատարված ծախսերի փոխհատուցմամբ (մինչև 50 տոկոսի չափով): Ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է աջակցել արտահանմանն օժանդակող կառույցների, դիստրիբյուտորների **առնվազն 60** ներկայացուցչի այցելությանը Հայաստան և/կամ տեղական արտադրողների գործարար այցելությանը օտարերկրյա պետություն:

Միջոցառման համար պայմանագրով նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ, որից ծախսվել է ընդամենը 350.0 հազ. դրամ (վճարվել է մեկ տեղական կազմակերպության՝ գործարար միջոցառման կազմակերպման ծառայության համար): Պայմանագրով նախատեսված՝ արդյունաբերական ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին կատարված ծախսերի փոխհատուցմամբ աջակցություն չի ցուցաբերվել: Հաշվետվությամբ ներկայացված են մի շարք միջոցառումներ, որոնց շրջանակներում ***պարզ չի դառնում պայմանագրով նախատեսված առնվազն 60 ներկայացուցչի այցելությունը Հայաստան:***

Պայմանագրով նախատեսված՝ արդյունաբերական ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին կատարված ծախսերի փոխհատուցմամբ աջակցություն չի ցուցաբերվել:

2.1.5. Միջոցառում N 4. Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում

Նախատեսված դասընթացները չեն կազմակերպվել

Այս միջոցառման համար պայմանագրով նախատեսվել էր 5,000.0 հազ. դրամ, որով պետք է իրականացվեր մշակող արդյունաբերության ոլորտների ընկերությունների և ազատ ունկնդիրների կարողությունների զարգացում: Նախատեսվել էր ապահովել **առնվազն 3** դասընթացի կազմակերպում: Սակայն ***այս մասով աշխատանքներ չեն կատարվել***: Չէին կատարվել նաև 2018թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հաշվետվության տվյալներով:

Այսպիսով, 2017թ.-ի ծրագրի իրականացման համար, հիմնադրամի աշխատանքների իրականացման մասով ՀՀ 2017թ. պետական բյուջեից տրամադրվել է 390,000.0 հազ. դրամ գումար, որն ամբողջությամբ փոխանցվել է հիմնադրամին, վերջինս կատարել է ընդամենը 302,151.63 հազ. դրամի աշխատանք/փաստացի ծախս, որի հիմնական մասն ուղղվել է ցուցահանդեսների իրականացման աշխատանքներին: Ծախսված գումարի 14.5%-ը (43,779.6 հազ. դրամ) հատկացվել է տարբեր միջոցառումներին հիմնադրամի աշխատակիցների գործուղման ծախսերին: Հետագայում, մեկ միջոցառման գծով ծախսը հանձնաժողովի կողմից չի ընդունվել՝ տնտեսվարող սուբյեկտների մասնակցության բացակայության պատճառով (1,627.34 հազ. դրամ), որն ավելացել է հիմնադրամին ավել փոխանցված գումարին: Ծրագրերի մյուս միջոցառումների մասերով կատարվել են քանակային առումով նախատեսվածից միգուցե նաև ավել ծավալով աշխատանքներ, որոնց իրականացման մեխանիզմը չի համապատասխանում պայմանագրով նախատեսվածին: Ուսուցումների մասով միջոցառումն ընդհանրապես չի իրականացվել, իսկ նախապես ծրագրով սահմանված «օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում» միջոցառումն ընդհանրապես դուրս է եկել ծրագրից:

2.2. «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ» ՓԲԸ-ի մասով կատարված աշխատանքները

2.2.1. Միջոցառում N 2.1. Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում

Նախարարության և ՈՒՎԿ-ի միջև «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 45-17 պայմանագիրը կնքվել է 2017թ. հուլիսի 17-ին, 65,000.0 հազ. դրամ արժեքով: 2017թ. դեկտեմբերի 15-ին կնքված թիվ 72-17 համաձայնագրով պայմանագրի գումարը ավելացել է և կազմել 85,000.0 հազ. դրամ:

Եթե հիմնադրամի հետ կնքված պայմանագրով 65,000.0 հազ. դրամով նախատեսված էր տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման աջակցություն ցուցաբերել՝ վարկի տոկոսադրույքի 3 տոկոսային կետին համարժեք գումար՝ առնվազն 12 սուբյեկտի, ապա ՈՒՎԿ-ի հետ կնքված պայմանագրով նույն 65,000.0 հազ. դրամով նախատեսվել է սուբսիդավորել վարկի տոկոսադրույքի մինչև 5 տոկոսային կետին, իսկ սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող վարկառուների դեպքում՝ մինչև 9 տոկոսային կետին համարժեք գումար՝ առնվազն 10 սուբյեկտի: Ավելին, փոփոխությամբ 20,000.0 հազ. դրամն

ավելանալուց հետո էլ, միևնույնն է, նախատեսվել է աջակցությունը ցուցաբերել առնվազն 10 սուբյեկտի:

Նախարարության կողմից ՈւՎԿ-ին կատարված վճարումները ներկայացված են ստորև աղյուսակում՝

Աղյուսակ 4

«ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ» ՓԲԸ-ի աշխատանքները և նրան կատարված վճարումները

հազ. դրամ

Կատարված աշխատանքները՝ ըստ հանձնաժողովի		Վճարման ամսաթիվը	Վճարված գումարը
23.10.2017թ. նիստով	*1,304.8*	11.08.2017թ.	2,997.19
Ընդամենը 9 ամիս		15.08.2017թ.	10,854.19
		28.08.2017թ.	3,373.58
		29.09.2017թ.	1,981.16
		Ընդամենը 9 ամիս	*19,206.11*
27.03.2018թ. նիստով	*7,435.3*	12.10.2017թ.	35,748.78
Ընդամենը 4-րդ եռամյակ		08.11.2017թ.	8,823.76
		25.12.2017թ.	1,775.09
		Ընդամենը 4-րդ եռամյակ	*46,347.63*
Ընդամենը տարի	***8,740.1***	***Ընդամենը տարի***	***65,553.74***

2017թ.-ին ՈՒՎԿ-ն հասցրել է սուբսիդավորել նախատեսվածի 13%-ը:

Ըստ հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, ՈւՎԿ-ն 2017թ.-ի ընթացքում հասցրել է իրականացնել 10 կազմակերպությունների վարկերի սուբսիդավորման ընդհանուր արժեքից՝ 65,553.7 հազ. դրամ գումարից ընդամենը 8,740.1 հազ. դրամը կամ 13%-ը: ՈւՎԿ-ին ավել փոխանցված 56,813.7 հազ. դրամը հանձնաժողովն ընդունել է դեբիտորական պարտք:

2.3. Ծրագրի մոնիթորինգ և ծրագրի արդյունքների գնահատական

2.3.1. Մոնիթրինգ

Պայմանագրերի 3-րդ մասով նախատեսված է նախարարության կողմից միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով մոնիթորինգի իրականացում:

Նախարարության կողմից նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով մոնիթորինգի արդյունքներ չեն ներկայացվել:

Նախարարության կողմից ներկայացված պարզաբանման համաձայն, ծրագրային միջոցառումների կատարման ***մոնիթորինգն իրականացվել է հիմնադրամի կողմից***

ներկայացված հաշվետվությունների հիման վրա՝ նշելով, որ ծրագրի շրջանակներում ՀՀ տարածքում իրականացվող միջոցառումներին մասնակցություն են ունենում նաև նախարարության ներկայացուցիչները, դրանից բացի իրականացվող միջոցառումները նախապես համաձայնեցվում են նախարարության հետ:

Սակայն, հաշվի առնելով, որ հիմնադրամի կողմից ներկայացրած հաշվետվությունը բովանդակային առումով ոչ ամբողջական էր (միջոցառումների շրջանակներում հատկապես մասնակիցների տեղեկատվության մասով), որոշ տվյալներ բացակայում էին, ապա նախարարության կողմից այդ տվյալների պարզապես թվաբանական ամփոփումը (գումարումը) չի կարող համարվել միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով մոնիթորինգի իրականացում:

2.3.2. Արդյունքների գնահատական

Նախարարության կողմից ամփոփվում են (հակիրճ աղյուսակի տեսքով) հիմնադրամի հաշվետվություններում ներկայացված միայն ցուցահանդեսների մասնակցության ցուցանիշները, սակայն չեն ամփոփվում որևէ կերպ մնացած միջոցառումների շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքները, և ***արդյունքում չի տրվում ամբողջական գնահատական ամբողջ ծրագրով իրականացված աշխատանքների արդյունքների վերաբերյալ***:

Չեն սահմանված արդյունքի գնահատման ցուցանիշներ:

Հարկ է նշել նաև, որ ***ինչպես նախկինում*** (արձանագրվել է ՀՀ ՎՊ 2014թ. ուսումնասիրության արդյունքում), ***այնպես էլ՝ 2017թ.-ի ծրագրով չեն սահմանվել արդյունքների գնահատման ցուցանիշներ, որոնցով կարելի էր գնահատել արտահանման ռազմավարության իրականացման գործընթացի և իրականացված արդյունքների արդյունավետությունը***, հատկապես, որ ծրագիրն իրականացվում է արդեն հինգ տարի, և ՀՀ պետական բյուջեից ծախսվել է ավելի քան 2 մլրդ դրամ գումար:

Ծանոթություն՝ Հաշվեքննության ընթացքում հայտնաբերված վերոգրյալ փաստերը պարունակող արձանագրությունները, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ներկայացվել են հաշվեքննության օբյեկտի ղեկավարին: Վերջինիս կողմից որոշ փաստերի վերաբերյալ ներկայացվել են բացատրություններ, որոնք կցված են հավելված 4-ում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1 Հիմնադրամի հետ կնքված պայմանագրով չի պահպանվել ՀՀ կառավարության հաստատած՝ դրամաշնորհի տեսքով ֆինանսական աջակցության օգտագործման պայմանագրի օրինակելի ձևով սահմանված վճարումների կարգը: Դրա հետևանքով հիմնադրամին վճարվել է կատարված աշխատանքներից 87,848.4 հազ. դրամ գումարով ավել գումար, ինչն ընդունվել է որպես դեբիտորական պարտք՝ չնայած, որ պայմանագրով աշխատանքների ծավալն ընդունվել էր ամբողջական կատարված:

2 Օրինակելի ձևին համապատասխան վճարման կարգ սահմանելու դեպքում, ավել վճարված գումարը կամ չէր փոխանցվի հիմնադրամին, կամ՝ կմնար նախարարության մոտ, և տարեվերջին հետ կվերադարձվեր ՀՀ պետական բյուջե:

3 Աշխատանքների իրականացման ընթացքում չի պահպանվել անգամ պայմանագրով սահմանված վճարումների կարգը:

4 Հաշվի առնելով, որ ծրագիրն իրականացվում է դեռևս 2013թ.-ից, և յուրաքանչյուր տարվա համար աշխատանքները պլանավորելիս հաշվի են առնվում նաև նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, հետևաբար՝ արդյունավետ չեն պլանավորվում համապատասխան ծավալով աշխատանքների համար ֆինանսական միջոցները: Արդյունքում՝ հիմնադրամում հենց ծրագրի առաջին տարիներից և շարունակելով մինչև հիմա, յուրաքանչյուր տարվա ավարտին մնում են չծախսված (նախարարության կողմից ավել վճարված) գումարներ, որոնց հետագա ծախսման ուղղությունները չեն սահմանվում որևէ իրավական ակտով կամ պայմանագրով: Աշխատանքների արդյունավետ պլանավորման դեպքում նման ավել ֆինանսական միջոցներ չէին փոխանցվի ՀՀ պետական բյուջեից:

5 Վերահսկիչ պալատը նույն փաստն արձանագրել էր նաև նախկին ուսումնասիրությունների արդյունքում, ըստ որի՝ հիմնադրամն այդ ազատ դրամական միջոցները ավանդադրում էր բանկերում, և նախարարությանն առաջարկել էր ձեռնարկել միջոցներ՝ ազատ դրամական միջոցների առաջացումը բացառելու ուղղությամբ: Սակայն նույն ձևով ավել գումարներ առաջացել են նաև հաջորդ տարիների

ընթացքում:

6 Ոչ արդյունավետ պլանավորման արդյունքում որոշ միջոցառումներ ընդգրկվել են ծրագրում, սակայն դրանք հետագայում կամ դուրս են եկել ծրագրից *(«օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում»)*, կամ ընդհանրապես չեն կատարվել, կամ կատարվել են պայմանագրով չնախատեսված այլ ձևերով:

Արդյունքում՝ չի ապահովվել ծրագրի համար նախատեսված ֆինանսական միջոցների օգտագործման տնտեսման սկզբունքը՝ ինչպես պլանավորման փուլում, այնպես էլ՝ ծրագրի իրականացման ընթացքում:

7 Ավել փոխանցված գումարի մի մասը 2018թ.-ին ծախսվել է տարբեր միջոցառումների վրա, որոնք չեն համապատասխանում պայմանագրի միջոցառումներին, իսկ պայմանագրով պահանջվում էր նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով:

8 Գործարար համաժողովներին մասնակցելու համար մշակող արդյունաբերության ոլորտների տնտեսվարող սուբյեկտներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու փոխարեն՝ գումարը ծախսվել է հիմնականում հիմնադրամի ներկայացուցիչների՝ այդ համաժողովների գործուղման ծախսերի վրա: Տնտեսվարողների կողմից նման պահանջարկ չներկայացնելու փաստը ցույց է տալիս ծրագրով այսպիսի ֆինանսական աջակցություն նախատեսելու անարդյունավետ լինելը:

9 Գործարար կապերի հաստատման միջոցառման շրջանակներում նույնպես նախատեսվել էր տնտեսվարող սուբյեկտներին աջակցության ցուցաբերում՝ ծախսերի փոխհատուցման ձևով, որը նույնպես չի կատարվել:

10 Հայկական արտադրանքի գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման աշխատանքների շրջանակներում, ըստ հիմնադրամի հաշվետվության, իրականացվել են բուկլետների և կատալոգների հրատարակում, էլեկտրոնային ռեսուրսների պատվիրում, տեղեկատվական նյութերի ձեռք բերում և այլն, սակայն այս ծրագրի գումարներից նման ծախսեր չեն կատարվել: Չի հիմնավորվում այս ծրագրի շրջանակներում 22,500.0 հազ. դրամ գումար նախատեսելը այդպիսի ծախսերի համար, եթե դրանց ծախսելու անհրաժեշտությունը չկար:

11 Չեն կատարվել նաև պայմանագրով նախատեսված ուսումնական դասընթացների կազմակերպման և ֆինանսավորման աշխատանքները:

12 Հիմնադրամի ներկայացված հաշվետվությունից պարզ չի, թե ընդհանուր առմամբ քանի տնտեսվարող սուբյեկտ է մասնակցել գործարար համաժողովներին, ցուցահանդեսներին: Մի շարք միջոցառումների շրջանակներում թվարկված չեն մասնակից տնտեսվարող սուբյեկտները: Նախարարությունն ընդամենը ամփոփել է ներկայացված թվային ցուցանիշներն՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ մի տնտեսվարող սուբյեկտը մասնակցել է մի քանի միջոցառումների: Արդյունքում, հաշվետվությամբ ներկայացված մասնակցության ցուցանիշներով հնարավոր չէ ամփոփել, թե ծախսված միջոցների դիմաց իրականում քանի տնտեսվարող սուբյեկտ է մասնակցել և նրանցից քանիսն են ներկայացնում մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններ, քանի որ մասնակիցների մեջ առկա են նաև բանկեր, տուրիստական կազմակերպություններ, հիմնադրամներ, համալսարան և այլն:

13 Պայմանագրով նախատեսվել էր ծրագրի նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով մոնիթորինգի իրականացում՝ նախարարության կողմից: Նման մոնիթորինգի արդյունքներ չկան: Դրա փոխարեն՝ նախարարությունը հիմնվել է հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվությունների վրա, որոնք ոչ ամբողջական են՝ ծրագրի արդյունքների գնահատման համար:

14 Ինչպես նախկինում նշվել էր նաև Վերահսկիչ պալատի նախորդ հաշվետվությամբ, այս անգամ էլ՝ ծրագրով չեն սահմանվում արդյունքների գնահատման ցուցանիշներ, որոնցով հնարավոր կլիներ այս տարիների ընթացքում գնահատել ՀՀ պետական բյուջեից տրամադրված ավելի քան 2 մլրդ դրամ գումարի դիմաց արտահանման ռազմավարության իրականացման գործընթացը և հասած արդյունքները:

Արդյունքում՝ չի ապահովվել ծրագրի նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի համար նախատեսված ֆինանսական միջոցների տնտեսման, ինչպես նաև՝ ծրագրի նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքները պահպանելու նպատակով՝

1. Իրականացնել ծրագրի աշխատանքների/միջոցառումների արդյունավետ պլանավորում՝ հետագայում դրանց աննպատակահարմարությունից ելնելով ծրագրում փոփոխությունների կատարումից խուսափելու համար:

2. Միջոցառումները և գումարները պլանավորելիս հաշվի առնել նաև նախորդ տարիների ծրագրերից հիմնադրամի մոտ առաջացած ավել գումարները:

3. Վճարման կարգը սահմանել այնպես, որ վճարումները կատարվեն կատարված աշխատանքների դիմաց՝ ավել փոխանցված գումարներից խուսափելու համար:

4. Իրականացնել ծրագրի բոլոր միջոցառումների ընթացիկ և վերջնական արդյունքների առավել արդյունավետ մոնիթորինգ՝ կազմելով արդյունքների գնահատման փաստաթուղթ կամ հաշվետվություն:

5. Ծրագրի համար տարիների ընթացքում տրամադրված պետական ֆինանսական միջոցներից ստացված արդյունքը գնահատելու համար ծրագրերում սահմանել արդյունքների գնահատման ցուցանիշներ (քանակական և/կամ բովանդակային):

Հավելված 1
հաց. դրամ

	Նախատեսված միջոցառումը	Նախարարության և «Հայաստանի զարգացման հիմնադրամի» միջև 23.05.2017թ.-ին ստորագրված պայմանագրով			Նախարարության և «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ-ի միջև 17.07.2017թ.-ին ստորագրված պայմանագրով	
		23.05.2017թ. Պայմանագիր	07.08.2017թ. Փոփոխություն	15.12.2017թ. Փոփոխություն	17.07.2017թ. Պայմանագիր	15.12.2017թ. Փոփոխություն
1	Գործարար համաժողովների /ֆորումների/, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և/կամ կազմակերպում	50,000.00	50,000.00	50,000.00		
2	Մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ	85,000.00	20,000.00	-		
2.1.	*արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում*	*65,000.00*	-	-	*65,000.00*	*85,000.00*
2.2.	*օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում*	*20,000.00*	*20,000.00*	-		
3	Հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում	330,000.00	330,000.00	335,000.00		
3.1.	*օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման /PR/ միջոցառումների կազմակերպում և իրականացում*	*22,500.00*	*22,500.00*	*22,500.00*		
3.2.	*ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում*	*302,500.00*	*302,500.00*	*312,150.00*		
3.3.	*Գործարար կապերի հաստատում*	*5,000.00*	*5,000.00*	*350.00*		
4	Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում	5,000.00	5,000.00	5,000.00		
5	Արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում	5,000.00	5,000.00	-		
	ԸՆԴԱՄԵՆԸ	**475,000.00**	**410,000.00**	**390,000.00**	**65,000.00**	**85,000.00**

Հավելված 2

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ՝ ԸՍՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Հիմնադրամի հիմնական գործառույթներն են՝

1. երկրի վարկանիշի ձևավորմանը, բարձրացմանը և խթանմանը նպաստելը.
2. գործարար միջավայրը, ներդրումները, արդյունաբերության ոլորտը կարգավորող բարենպաստ օրենսդրական դաշտի ձևավորման ու վարչարարական խոչընդոտների վերացման միջոցառումների մշակմանն աջակցելը և մասնակցությունը.
3. պետական մարմինների և գործարարների միջև համագործակցությանը, պետություն-մասնավոր հատված արդյունավետ երկխոսության և համագործակցության շարունակական կատարելագործմանը նպաստելը, համատեղ ծրագրերի իրականացումը.
4. իր իրավասությունների սահմաններում միջազգային կազմակերպությունների հետ համագործակցումը և համատեղ ծրագրերի իրականացումը.
5. օտարերկրյա ներդրողներին «Մեկ կանգառի կենտրոն» սկզբունքով սպասարկումը և հետներդրումային ծառայությունների մատուցումը.
6. ներդրումային, արդյունաբերական արտահանման խթանման ծրագրերի մշակմանը մասնակցությունը և իրականացումը, առանձին դեպքերում՝ դրամաշնորհների տրամադրման միջոցով.
7. օտարերկրյա ներդրումների իրավական, կառուցվածքային և կազմակերպական պայմանների բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը մասնակցությունը և դրանք ներկայացնելը.
8. տնտեսության և դրա ոլորտների ներդրումային վարկանիշի ձևավորմանը նպաստելը.
9. տեղական և օտարերկրյա ներդրողների միջև պոտենցիալ գործարար գործընկերության խթանումն ու համակարգումը.
10. մասնավոր հատվածի հետ համատեղ ներդրումային ծրագրերի մշակումը, կառավարումը, ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցության գործիքների կիրառումը, ծրագրերի իրականացմանը շարունակական աջակցությունը.
11. Հայաստանի տնտեսության և նրա ոլորտների մրցակցային առավելությունների խթանումը.
12. օտարերկրյա ներդրողներին Հայաստանի Հանրապետությունում ներդրումային և գործարար միջավայրի, առավելությունների և հնարավորությունների մասին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.
13. տնտեսության զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանն օժանդակելը.
14. առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը, այդ հարաբերությունների զարգացման գործընթացներին մասնակցությունը և համագործակցությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կազմակերպումը.
15. օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով քարոզարշավների իրականացումը.
16. Հայաստանի Հանրապետության՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրման ծրագրերի իրականացումը.
17. արտահանման ներուժ ունեցող ոլորտների և դրանց թիրախային շուկաների բացահայտումը.
18. հայկական կազմակերպությունների և (կամ) ձեռնարկատերերի՝ արտահանման ներուժի գնահատումը, դրանց զարգացմանն ու արտահանմանն ուղղված գործունեությանն աջակցությունը, այդ թվում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ.

19. կազմակերպությունների և (կամ) ձեռնարկատերերի՝ ցուցահանդեսներին, տոնավաճառներին, համտեսներին, համաժողովներին, սեմինարներին և այլ համանման միջոցառումներին մասնակցությանն աջակցելը, ինչպես նաև դրանց կազմակերպումը.
20. արտահանողների՝ «Մեկ կանգառի կենտրոն» սկզբունքով սպասարկումը.
21. արդյունաբերության զարգացման ծրագրերի իրականացումը, ֆինանսավորումը, համակարգումը և դիտարկումը.
22. արդյունաբերական և ազատ տնտեսական գոտիների ստեղծմանն ու դրանց հետագա զարգացմանն աջակցելը.
23. ինովացիոն և տեխնոլոգիական զարգացման ծրագրերին աջակցելը.
24. տնտեսության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինմանն աջակցելը.
25. ոլորտային միավորումների և առանձին կազմակերպությունների միջև համագործակցության խթանումը.
26. շուկաների մասին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը.
27. գիտական արդյունքի առևտրայնացմանն ու տեխնոլոգիաների փոխանցմանն աջակցելը.
28. մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի մշակումն ու իրականացումը.
29. արտահանմանն ուղղված արդյունաբերական ռազմավարությանը համապատասխան ստեղծված ոլորտային խորհուրդների քարտուղարության վարումը.
30. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հիմնադրամի նպատակից բխող այլ գործառույթներ:

Հավելված 3
հազ. դրամ

	Նախատեսված միջոցառումը	Նախատեսված գումարը	Ծախսված գումարը	Տարբերությունը
1	**Գործարար համաժողովների /ֆորումների/, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և/կամ կազմակերպում, որից՝**	**50,000.00**	**25,898.63**	**24,101.37**
ա	*համաժողովների մասնակցության համար գործուղման ծախսեր (օրապահիկ, գիշերավարձ)*		*9,641.87*	
բ	*համաժողովների մասնակցության համար ավիատոմսերի ձեռք բերում*		*5,227.42*	
գ	*Տեղական ա/ծ, ՍՊԸ, ՓԲԸ-ների վճարում*		*7,527.66*	
դ	*Մասնակցության ծախսերի գումարի փոխանցում*		*3,492.68*	
ե	*Գանձում փոխանցումից*		*9.00*	
3	**Հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվություն ապահովում**	**335,000.00**	**276,253.00**	**58,747.00**
3.1.	**օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման /PR/ միջոցառումների կազմակերպում և իրականացում, որից՝**	**22,500.00**	**3,400.00**	**19,100.00**
ա	*Տեղական ա/ծ, ՍՊԸ-ների վճարում*		*3,400.00*	
3.2.	**ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում, որից՝**	**312,150.00**	**272,503.00**	**39,647.00**
ա	*համաժողովների մասնակցության համար գործուղման ծախսեր (օրապահիկ, գիշերավարձ)*		*24,360.15*	
բ	*համաժողովների մասնակցության համար ավիատոմսերի ձեռք բերում*		*4,549.93*	
գ	*Տեղական ա/ծ, ՍՊԸ, ՓԲԸ-ների վճարում*		*5,457.49*	
դ	*Մասնակցության ծախսերի գումարի փոխանցում*		*251,467.97*	
ե	*Գանձում փոխանցումից*		*238.25*	
զ	*Տեղական կազմակերպությունների կողմից մասնակցության վճարների վերադարձ*		*(13,570.78)*	
3.3.	**Գործարար կապերի հաստատում, որից՝**	**350.00**	**350.00**	**-**
ա	*Տեղական ա/ծ, ՍՊԸ-ների վճարում*		*350.00*	
4	**Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում**	**5,000.00**	**-**	**5,000.00**
	ԸՆԴԱՄԵՆԸ, որից՝	**390,000.00**	**302,151.63**	**87,848.37**
ա	*համաժողովների մասնակցության համար գործուղման ծախսեր (օրապահիկ, գիշերավարձ)*		*34,002.01*	

հազ. դրամ

	Նախատեսված միջոցառումը	Նախատեսված գումարը	Ծախսված գումարը	Տարբերությունը
բ	*համաժողովների մասնակցության համար ավիաուղևորների ճեռքբերում*		*9,777.35*	
գ	*Տեղական ա/ձ, ՍՊԸ, ՓԲԸ-ների վճարում*		*16,735.15*	
դ	*Մասնակցության ծախսերի գումարի փոխանցում*		*254,960.65*	
ե	*Գանձում փոխանցումից*		*247.25*	
զ	*Տեղական կազմակերպությունների կողմից մասնակցության վճարների վերադարձ*		*(13,570.78)*	

Հավելված 4

ՀԱՇՎԵՔՆՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Արձանագրություն	Պարզաբանում-բացատրություն
1	Պայմանագրով չի պահպանվել օրինակելի ձևով սահմանված վճարումների կարգը	Պայմանագրում ծրագրի իրականացման ֆինանսավորման կատարման ընթացակարգը սահմանվել է հաշվի առնելով ՀՀ կառավարության 24.12.2003թ. N 1937 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի, ըստ որի «Պետական մարմնում պայմանագրի կատարման հետ կապված վճարային փաստաթղթերը կազմվում են հանձնաժողովի եզրակացության հիման վրա»: Նախարարությունում ստեղծված է Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները ընդունող համապատասխան հանձնաժողով, որի որոշման հիման վրա կատարվում են վճարումները: ՀՀ կառավարության 29.04.2010թ. N566 որոշմամբ հաստատվել է պայմանագրի օրինակելի ձևը, իսկ պայմանագրում վճարման կարգը սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի, ինչպես նաև 450-րդ հոդվածի 2-րդ մասի և 1284-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին համապատասխան: Վճարման նման կարգի պայմանագրում սահմանումը պայմանավորված է Ծրագրով իրականացվող միջոցառումների առանձնահատկություններով, մասնավորապես արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսներին մասնակցության համար համապատասխան ցուցահանդեսի կազմակերպիչները հատկացվող տաղավարի վարձակալության համար պահանջում են կանխավճարի վճարում, իսկ Բիզնես Արմենիա հիմնադրամը համապատասխան վճարումները մինչև ցուցահանդեսների մեկնարկը չէր կարող իրականացնել համապատասխան միջոցներ չունենալու պատճառով:
2	- Չի պահպանվել անգամ պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդունման և վճարման կարգը - Չի պահպանվել առաջին եռամսյակի համար պետական բյուջեով նախատեսված 47500.0 հազ. դրամի վճարման կարգը	Հիմնադրամին վճարումների իրականացումը կատարվել է հաշվի առնելով նախորդ տարիների մնացորդ/տնտեսված գումարների մնացորդները, փաստացի կատարված աշխատանքների ծավալները, պետական բյուջեի միջոցների ելքերի արդյունավետությունը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել Ծրագրի բնականոն ընթացքը, քանի որ, որպես կանոն Ծրագիրը հաստավում է տվյալ տարվա երկրորդ եռամասակի ընթացքում: 2018թ. առաջին եռամսյակի համար պետական բյուջեով նախատեսված 47500.0 հազ.դրամի վճարումը չի իրականացվել, քանի որ, ինչպես նշված է նաև արձանագրությամբ, Հիմնադրամի կողմից համապատասխան հայտ չի ներկայացվել:
3	Ավել վճարված գումարը՝ 87848.4 հազ. դրամ, հանձնաժողովն ընդունել է դեբիտորական պարտք	Ծրագրի շրջանակներում 2017 թվականի ընթացքում իրականացված միջոցառումների և դրանց գծով կատարված ծախսերի ընդհանուր ծավալի մասին հաշվետվությունը Հիմնադրամի կողմից ներկայացվել է 2018 թվականի հունվարի 12-ին, ըստ որի տարվա ընթացքում փաստացի կատարված ծախսերը կազմել են 302151.6 հազ.դրամ, իսկ Հիմնադրամին վերջին վճարումը կատարվել է 26.12.2017թ.՝ 147917.0 հազ.դրամի չափով, հիմք

Հ/Հ	Արձանագրություն	Պարզաբանում-բացատրություն
		ընդունելով Հիմնադրամի կողմից ներկայացված 2017թ. 4-րդ եռամսյակի հայտը, այսինքն վճարման պահին տարվա կտրվածքով կատարված ծախսերի ամբողջ ծավալի վերաբերյալ նախարարությունը տեղեկատվություն չուներ: Այդ իսկ պատճառով 2018թ. մարտի 27-ի նիստով հանձնաժողովը ընդունել է կատարված աշխատանքները 302151.6 հազ.դրամի չափով, իսկ մնացած 87848.4 հազ.դրամ գումարը որակել որպես 2017թվականի Ծրագրի շրջանակներում առաջացած Հիմնադրամի դեբիտորական պարտք:
4	Հետևաբար ճիշտ չեն պլանավորվել նախատեսված ծավալով աշխատանքների համար ֆինանսական միջոցների իրատեսական ծավալներ	Ծրագրի միջոցառումների և բաղադրիչների արժեքային ծավալները հիմնականում նախատեսնվել են հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում Ծրագրի իրականացման ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները:
5	- Պարզ չեն մնացած գումարի հետագա ծախսման ուղղությունները - Նշված միջոցառումները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված միջոցառումներին, և պայմանագրում և Նախարարի N 402-Ա հրամանով հաստատված ծրագրում որևէ նման փոփոխություններ չեն կատարվել:	2017թվականի Ծրագրի իրականացման արդյունքում տնտեսված/ չօգտագործված միջոցները ծախսվել են Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարականներով սահմանված ուղղություններով և նպատակներով, ինչպես նաև Նախարարության հետ համաձայնեցված ուղղություններով և իրենց բնույթով հանդիսանում են արտահանման խթանման և ներդրումների ներգրավմանն ուղված միջոցառումներ և դրանք իրականացվել են ըստ տվյալ պահին առաջացած անհրաժեշտության, որոնք կանխատեսել հնարավոր չէր, ուստի, Ծրագրում և պայմանագրում համապատասխան փոփոխություններ չեն կատարվել: Մասնավորապես, 2018թ. հոկտեմբերի 22-ից 24-ը Երևանում անցկացվել է «Եվրասիական շաբաթ» ցուցահանդեսային համաժողովը, որի անցկացման համար համապատասխան տարածքի պարտավորությունը պատկանում էր Հայաստանի Հանրապետությանը, ուստի, պետական բյուջեից լրացուցիչ միջոցներ չներգրավելու նպատակով ՀՀ կառավարության գրավոր համաձայնությամբ այն իրականացվել է մնացորդ գումարի հաշվին, ինչը կատարվել է «Մերիդիան հոլդինգ» ՓԲԸ-ից ցուցահանդեսային տարածքի վարձակալությամբ՝ ծախսելով շուրջ 24.0 մլն դրամ (ՀՀ վարչապետի 19.07.2018թ. N 02/23.23/16721-18 հանձնարարական, Նախարարի 26.08.2018թ. N 01/16.2/5874-18 գրություն)
6	- Այս միջոցառման շրջանակներում որևէ մշակող արդյունաբերության ոլորտների տնտեսվարող սուբյեկտների չի ցուցաբերվել պայմանագրով սահմանված աջակցության տեսակը՝ կատարված ծախսերի փոխհատուցում (համաֆինանսավորում)՝ մինչև 50	2017 թ. ընթացքում իրականացված «Գործարար համաժողովների (ֆորումների), ինչպես նաև՝ այլ համանման միջոցառումների մասնակցություն և/կամ կազմակերպում» միջոցառումների մեծ մասը կազմակերպվել և անցկացվել է արտերկրում, որին մասնակցած տնտեսվարող սուբյեկտների ծախսերի փոխհատուցում (համաֆինանսավորում) չի տրամադրվել նրանց կողմից համապատասխան հայտեր ներկայացված չլինելու պատճառով՝ մասնակցությունը հիմնականում ապահովվել է հիմնադրամի և պետական կառույցների ներկայացուցիչների միջոցով, իսկ Հայաստանի Հանրապետությունում անցկացված միջոցառումների մասնակից տնտեսվարող սուբյեկտները մասնակցության համար ծախսեր չեն կատարել:

Հ/Հ	Արձանագրություն	Պարզաբանում-բացատրություն
	տոկոսի չափով - Պարզ չի, թե քանի տնտեսվարող սուբյեկտ է մասնակցել թվարկված 15 միջոցառումներին (12.12.2018թ. դրությամբ նման տեղեկատվություն Հաշվեքննիչ պալատին չի տրամադրվել)	Համապատասխան տեղեկատվությունը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով 13.12.2018թ.
7	ՈՒՎԿ-ին ավել փոխանցված 56813.7 հազ. դրամը հանձնաժողովն ընդունել է դեբիտորական պարտք	«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին (ներկայումս «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ) վճարումները կատարվել են կնքված պայմանագրի դրույթներին համապատասխան՝ հիմք ընդունելով կնքված վարկավորման պայմանագրերը, որոնցով վարկերը տրվել են երկու տարի ժամկետով:Պայմանագրերով սահմանված են վարկի գումարի, տոկոսների մարման և տոկոսների մասնակի սուբսիդավորման գումարների մարման ամսական ժամանակացույցներ:ՈՒՎԿ-ին տոկոսների մասնակի սուբսիդավորման գումարները վճարվել են ամբողջությամբ՝ պայմանագրում նշված՝ տոկոսների մասնակի սուբսիդավորման գումարներից ոչ ավելի, իսկ ընկերությունը մարումները կատարում է ըստ նշված ժամանակացույցների՝ Նախարարության կողմից վճարված գումարների հաշվին:Նշվածի վերաբերյալ Ընկերությունը ներկայացնում է պայմանագրով սահմանված ամսական հաշվետվություններ, որոնցում արտացոլվում են յուրաքանչյուր ամիս մարված տոկոսների մասնակի սուբսիդավորման գումարները:Անհրաժեշտ է նշել, որ 2017թ. տրամադրված վարկերից երկու կազմակերպության պայմանագրերը կասեցվել են և տոկոսների մասնակի սուբսիդավորման 3739.0 հազ.դրամ գումարը 2018թ. ՈՒՎԿ-ի կողմից վերադարձվել է պետական բյուջե:2018 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 2017 թվականի սուբսիդավորման գումարի մնացորդը ըստ հաշվետվության կազմել է 22366.9 հազ. դրամ:
8	- արդյունքում չի տրվում ամբողջական գնահատական ամբողջ ծրագրով իրականացված աշխատանքների արդյունքների վերաբերյալ: -ինչպես նախկինում (արձանագրվել է ՀՀ ՎՊ 2014թ. ուսումնասիրության արդյունքում), այնպես էլ՝ 2017թ.-ի ծրագրով չեն սահմանվել արդյունքների գնահատման ցուցանիշներ, որոնցով կարելի էր գնահատել արտահանման	Նախարարի 03.05.2017թ N 402-Ա հրամանով սահմանված են ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշները, որոնք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 28.12.2017 թվականի N 1717-Ն որոշման հավելված 11-ի 11.11 աղյուսակում նշված արդյունքային ցուցանիշներին: Ծրագրի վերջնական արդյունքը հանդիսանում է արտահանման ծավալների շարունակական աճը և ՀՀ արտադրանքի ներկայացվածության աստիճանի բարձրացումը, ինչը արտացոլվում է Նախարարության հաշվետվություններում և Ազգային վիճակագրության ծառայության հրապարակումներում:

Հ/Հ	Արձանագրություն	Պարզաբանում-բացատրություն
	ռազմավարության իրականացման գործընթացի և իրականացված արդյունքների արդյունավետությունը	
9	- Հաշվետվությամբ պարզ չէ, թե ընդհանուր առմամբ քանի տնտեսվարող սուբյեկտ է մասնակցել այս ցուցահանդեսներին, քանի որ որոշ ցուցահանդեսներին մասնակից տնտեսվարող սուբյեկտները թվարկված չեն - Հաշվետվությամբ ներկայացված են մի շարք միջոցառումներ, որոնց շրջանակներում պարզ չի դառնում պայմանագրով նախատեսված առնվազն 60 ներկայացուցչի այցելությունը Հայաստան	Ինչպես ցուցահանդեսներին մասնակցած, այնպես էլ արձանագրությամբ նշված մյուս միջոցառումներին մասնակցած տնտեսվարողների ցանկերը էլեկտրոնային եղանակով տրամադրվել են հաշվեքննություն իրականացնող անձանց